ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/103

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.07.2018թ. թիվ 03/26-3/12325-18 գրությամբ Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 04.07.2018թ. թիվ 02/16.4/3159-18 գրության հիման վրա, 07.07.2018թ. թիվ 03/26-3/12325-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ, որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/103 ընթացակարգի շրջանակներում 12.07.2018թ. ժամը 10:40-ին և 16.07.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.07.2018թ. թիվ 02/16.4/3159-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար 2018 թվականի հունիսի 5-ին կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով պատվերով տպագրվող նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգում 1-ին, 6-րդ և 7-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը, որին ծանուցվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանի հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/103 ընթացակարգի շրջանակներում 12.07.2018թ. ժամը 10:40-ին և 16.07.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով 22.06.2018թ. ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3-1 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից ընդհանրապես չեն ներկայացվել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.07.2018թ. թիվ 03/26-3/12325-18 գրությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 04.07.2018թ. թիվ 02/16.4/3159-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև

առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը:

Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը պարտավորվել է առաջին առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում

ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 կետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 22.06.2018թ. ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3-1 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից ընդհանրապես չեն ներկայացվել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում եմ, Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանը «ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.07.2018թ. թիվ 03/26-3/12325-18 գրությամբ Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանին (ՀՎՀՀ՝ 25309815) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Սամվել Մարտիրոսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**